ՐԱՖՖԻ

Ողբ Զեյթունցի կնոջ տանը մեռած տղամարդու վրա

Ափսո՛ս, որ այդպես անփառք և անշուք,
Փափուկ մահճի մեջ փչեցիր քո հոգին,
Ափսո՛ս, որ մահը քեզի հանդիպեց
Քո խաղաղ տնակի կամարի տակին:

Դու մի քաջ էիր՝ արի և հզոր,
Քաջերի սուրը թող նյութեր քեզ մահ,
Կռվի դաշտիցը քո արյունոտ մարմին
Ես տուն բերեի՝ սրտով զո՛հ... ուրա՛խ...

Ինձ դառն չէր հայնժամ թափել արտասուք
Քո արնով ներկված դիակի վերան,
Ինձ ցավ չէր հայնժամ ողբերով երգել
Քո պարծանքներով կանգնած գերեզման:

Զի Հայոց տիկնայք ինձի կասեին՝
Փա՛ռք, պատիվ քեզի, երջանիկ այրի,
Դու բախտավոր ես կնիկների մեջ,
Զի կորուսիր այր՝ քաջ, հսկա, արի:

Ինձ քաղցր էր հայնժամ թափեք արտասուք
Արնով զարդարված դիակիդ վերան,
Եվ ծաղիկներով պճնել, զարդարել
Քո միշտ պաշտելի հողադամբարան:

Թո՛ղ պատերազմում, կռիվի դաշտում,
Մեր Հայրենիքի փրկության համար,
Սուրը քո ձեռին, փառավոր մահով,
Թո՛ղ դու զոհեիր քո արյուն արդար:

Ինձ քաղցր էր հայնժամ իմ ճեռով փակել
Քո այդ սև, հպարտ, շիջած աչքերը,
Չի հազար աչեր պիտ արտասվեին
Քո հզոր թրից սպանվածները:

Չի ես գիտեի, որ դու թոցրիր
Հարյուր գլուխներ թշնամու ուսերեն,
Չի ես գիտեի, որ դու զրկեցիր
Հարյուր կնիկներ յուրյանց այրերեն:

Այդ զարհուրելի խոր-խոր սպիներ
Քո արությանցը՝ վկա և նշան,
Չունի մի տղամարդ հայոց քաջերից,
Ո՛չ քուրդ, ո՛չ արաբ և ո՛չ մի թուրքման:

Բայց ափսո՛ս, քեզ հետ՝ ալ-արդակարմիր
Դու մի թարմ սպի չընտարար գերեզման,
Դու մեռա՛ր, անբախտ, հասարակ մահով
Փափուկ մահճի մեջ... քո բարձի վերան...